


1.2.6. Մանրածախ առևտուր, այլ ծառայություններ (սպառողական շուկա)

ՀՀ սպառողական շուկան (մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը) 2000թ. հունվար-հունիսին

| | 2000թ. հունվար-հունիսի փաստացի ծավալը, մլն. դրամ | 2000թ. հունվար-հունիսը տոկոսներով 1999թ. հունվար-հունիսի նկատմամբ | Տոկոսներով՝ ընդհանուրի նկատմամբ | |
|--|--|---|---------------------------------|-----------------------|
| | | | 2000թ. հունվար-հունիս | 1999թ. հունվար-հունիս |
| Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, ընդամենը | 234477.3 | 105.8 | 100.0 | 100.0 |
| <i>այդ թվում՝</i> | | | | |
| մանրածախ ապրանքաշրջանառություն | 157862.6 | 106.3 | 67.3 | 67.4 |
| բնակչությանը մատուցված ծառայություններ | 76614.7 | 103.8 | 32.7 | 32.6 |

ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների տեսակարար կշիռները 2000թ. հունվար-հունիսին




ՀՀ սպառողական շուկան 2000թ. I կիսամյակում բնութագրվում է կայուն աճի միտումով: Ընդ որում, II եռամսյակում I եռամսյակի համեմատությամբ սպառողական շուկայի ընդհանուր ծավալում նկատելի է մանրածախ առևտրի կազմակերպությունների ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշռի աճ՝ 3.8 տոկոսային կետով: Հարկ է նշել, որ նույն ժամանակաշրջանում բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալի համամասնական աճին զուգընթաց, սպառողական շուկայի ընդհանուր ծավալում նկատելի է այդ մասի տեսակարար կշռի նվազման միտում:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ 2000թ. հունվար-հունիսին սպառողական շուկայի աճը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմել է 105.8 տոկոս, իսկ հունիսին մայիսի համեմատությամբ գրանցվել է այդ նույն ցուցանիշի աճ՝ 8.9 տոկոս:

Մանրածախ առևտուր

2000թ. հունվար-հունիսին ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը, փաստացի գներով, կազմել է մոտ 157.9 մլրդ. դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 6.3 տոկոսով, իսկ 2000թ. հունիսին մայիս ամսվա համեմատությամբ մանրածախ ապրանքաշրջանառության աճի տեմպը, համադրելի գներով, կազմել 109.2 տոկոս:

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի դինամիկան 2000թ. հունվար-հունիսին նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, տոկոսով



Ինչպես երևում է գծապատկերից, մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի ամենաբարձր աճի տեմպ՝ 115.0%, արձանագրվել է 2000թ. հունվարին: Հունվարին հաջորդող ամիսներին արձանագրվել է այդ ցուցանիշի նվազման միտում:


ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը 2000թ. հունվար-հունիսին

| | Ապրանքաշրջանառության փաստացի ծավալը, մլն. դրամ | 2000թ. հունվար-հունիսը տոկոսներով 1999թ. հունվար-հունիսի նկատմամբ (համադրելի գներով) | Ապրանքաշրջանառության տեսակարար կշիռը տոկոսով՝ ընդհանուրի նկատմամբ |
|---|--|--|---|
| Ընդամենը | 157862.6 | 106.3 | 100 |
| <i>այդ թվում՝</i> | | | |
| խանութներ | 65946.1 | 117.8 | 41.8 |
| հանրային սննդի օբյեկտներ | 1446.4 | 119.4 | 0.9 |
| սպառողական ապրանքների շուկաներ (տոնավաճառներ) | 40217.4 | 77.7 | 25.4 |
| գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ | 10719.6 | 215.7 | 6.8 |
| կրպակներ (տաղավարներ) | 39533.1 | 114.1 | 25.1 |

Բնակչության սպառողական պահանջարկը գլխավորապես բավարարվում է խանութների, սպառողական ապրանքների շուկաների և կրպակների միջոցով: 2000թ. հունվար-հունիսին հանրապետության մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալի գերակշռող մասը՝ 92.3 տոկոսը (145696.6 մլն. դրամ), ձևավորվել է վերը նշված մանրածախ առևտրի կազմակերպությունների միջոցով: Այս միտումը բնորոշ է հանրապետության գրեթե բոլոր մարզերին: Այսպես, Արարատի մարզում ապրանքաշրջանառության

ծավալի 95.7 տոկոսը (2529.2 մլն. դրամ), Կոտայքում՝ 94.5 տոկոսը (7663.9 մլն. դրամ), Լոռու մարզում՝ 91.2 տոկոսը (3660.5 մլն. դրամ), Տավուշում՝ 83.6 տոկոսը (1741.7 մլն. դրամ) և ք.Երևանում՝ 95.2 տոկոսը (120212.5 մլն. դրամ) ձևավորվել են վերջիններիս միջոցով:

Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալն ըստ ձևավորման աղբյուրների, մարզերով 2000թ հունվար-հունիսին
(տոկոսով՝ ընդհանուրի նկատմամբ)



Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալների դինամիկան ըստ ձևավորման աղբյուրների, 2000թ. հունվար-հունիսին

| | Ապրանքաշրջանառության ծավալը, ընդամենը, մլն. դրամ | այդ թվում՝ տոկոսներով ընդհանուրի նկատմամբ | | | | |
|-----------------|--|---|-------------------------|--------------------------------|-------------------------------------|-----------------------|
| | | խանութներ | հանրային սննդի օբեկտներ | սպառողական ապրանքների շուկաներ | գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ | կրպակներ (տաղավարներ) |
| հունվար | 26456.0 | 31.6 | 0.6 | 30.6 | 8.8 | 28.4 |
| հունվար-փետրվար | 50444.2 | 36.2 | 0.8 | 28.1 | 8.2 | 26.7 |
| հունվար-մարտ | 73833.1 | 37.9 | 0.8 | 27.4 | 7.7 | 26.2 |
| հունվար-ապրիլ | 98459.0 | 40.2 | 0.8 | 26.1 | 7.5 | 25.4 |
| հունվար-մայիս | 126915.9 | 40.7 | 0.9 | 25.8 | 7.1 | 25.5 |
| հունվար-հունիս | 157862.6 | 41.8 | 0.9 | 25.4 | 6.8 | 25.1 |


Ըստ ամիսների, մանրածախ ապրանքաշրջանառության ծավալների դինամիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ մի կողմից խանութների, սպառողական ապրանքների շուկաների, կրպակների և մյուս կողմից հանրային սննդի կազմակերպությունների ու գյուղատնտեսական արտադրանքի շուկաների միջոցով իրականացվող առևտրի տեսակարար կշիռները ապրանքաշրջանառության ընդհանուր կառուցվածքում 2000թ. հունվար-հունիսին էական փոփոխություններ չեն կրել:

ՀՀ մանրածախ առևտրի կազմակերպությունների քանակը և ապրանքաշրջանառության ծավալներն ըստ մարզերի, 2000թ. հունվար-հունիսին

| Մ Ա Ր Ձ Ե Ր | Ընդամենը | | այդ թվում | | | | | | | | | |
|-------------|---|--|-------------|-------------------|--------------------------|-------------------|--------------------|-------------------|----------------------------|-------------------|--------------------------------|-------------------|
| | Առևտրի կազմակերպությունների քանակը, հատ | Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ | խանութներ | | հանրային սննդի օբյեկտներ | | կրպակներ, տավարներ | | գյուղատնտեսության շուկաներ | | սպառողական ապրանքների շուկաներ | |
| | | | քանակը, հատ | ծավալը, մլն. դրամ | քանակը, հատ | ծավալը, մլն. դրամ | քանակը, հատ | ծավալը, մլն. դրամ | քանակը, հատ | ծավալը, մլն. դրամ | քանակը, հատ | ծավալը, մլն. դրամ |
| Արագածոտն | 369 | 1036.9 | 75 | 275.7 | 4 | 41.5 | 286 | 663.6 | 4 | 56.1 | - | - |
| Արարատ | 692 | 2641.2 | 424 | 1577.7 | 19 | 32.5 | 241 | 722.3 | 3 | 79.5 | 5 | 229.2 |
| Արմավիր | 993 | 3623.7 | 172 | 498.2 | 5 | 26.8 | 811 | 1141.6 | 2 | 1524.1 | 3 | 433.0 |
| Գեղարքունիք | 974 | 1991.2 | 526 | 537.8 | 19 | 20.0 | 418 | 431.7 | 4 | 415.3 | 7 | 586.4 |
| Լոռի | 944 | 4015.1 | 331 | 1299.0 | 16 | 39.0 | 588 | 1765.1 | 5 | 315.6 | 4 | 596.4 |
| Կոտայք | 1569 | 8107.5 | 231 | 1784.9 | 27 | 129.4 | 1299 | 5093.8 | 3 | 314.2 | 9 | 785.2 |
| Շիրակ | 885 | 5744.8 | 389 | 1675.3 | 36 | 76.3 | 454 | 1291.4 | 4 | 1979.6 | 2 | 722.2 |
| Սյունիք | 689 | 2213.6 | 255 | 650.0 | 13 | 22.6 | 417 | 794.2 | 3 | 718.0 | 1 | 28.8 |
| Վայոց Ձոր | 175 | 169.4 | 72 | 96.9 | 16 | 2.3 | 84 | 62.0 | 3 | 8.2 | - | - |
| Տավուշ | 579 | 2083.9 | 222 | 546.9 | 28 | 13.6 | 325 | 564.6 | 2 | 328.6 | 2 | 630.2 |
| ք. Երևան | 5919 | 126235.3 | 1965 | 57003.7 | 338 | 1042.4 | 3583 | 27002.8 | 12 | 4980.4 | 21 | 36206.0 |
| Ընդամենը | 13788 | 157862.6 | 4662 | 65946.1 | 521 | 1446.4 | 8506 | 39533.1 | 45 | 10719.6 | 54 | 40217.4 |

2000թ. հունվար-հունիսին մանրածախ առևտրի կազմակերպությունների ապրանքաշրջանառության ծավալների վերլուծությունն ըստ մարզերի, ցույց է տալիս, որ հանրապետության մարզերին բնորոշ է ապրանքաշրջանառության տարբեր մակարդակներ: Երևան քաղաքի և հանրապետության մնացած մարզերի ապրանքաշրջանառության մակարդակների տարբերությունները հիմնականում պայմանավորված է առևտրի կազմակերպությունների քանակով, բնակչության թվաքանակով, ապրանքաշրջանառության կառուցվածքով, նյութատեխնիկական բազայի հագեցվածությամբ, ինչպես նաև բնակչության գնողունակ պահանջարկի մակարդակի տարբերություններով և արտաքին շուկաներին կապող կոմունիկացիաների տեղաբաշխմամբ:

2000թ.հունվար-հունիսին ապրանքաշրջանառության ծավալների տեսակարար կշիռներն ըստ մարզերի



Ինչպես երևում է գծապատկերից, հանրապետության մանրածախ առևտրի ապրանքաշրջանառության ծավալի 80.0 տոկոսը (126235.3 մլն.դրամ) ապահովում են Երևան քաղաքի մանրածախ առևտրի կազմակերպությունները, որը բացատրվում է ինչպես վերը նշված գործոններով, այնպես էլ այն հանգամանքով, որ հանրապետության մի շարք

մարզերի (հիմնականում Երևան քաղաքին մոտ գտնվող մարզերի) բնակչությունը ապրանքների ձեռքբերման պահանջարկի մի մասը բավարարում է նաև Երևան քաղաքի առևտրի կազմակերպություններում:


Հանրապետության մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները: Հանրապետությունում հաշվառված սպառողական ապրանքների շուկաներից (տոնավաճառներ) ստացված հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական լրահաշվարկի հիման վրա, 2000թ. հունվար-հունիսին ապրանքաշրջանառության ծավալը, փաստացի գներով, կազմել է 40217.4 մլն. դրամ, որի աճի տեմպը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, կազմել է 77.7 տոկոս:

ՀՀ սպառողական ապրանքների շուկաների (տոնավաճառներ) ապրանքաշրջանառության ծավալների վերաբերյալ տվյալներն ըստ մարզերի, 2000թ.հունվար-հունիսին

| | Սպառողական ապրանքների շուկաների քանակը | Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ | այդ թվում տոկոսով՝ ընդհանուրի նկատմամբ | |
|-------------|--|--|--|------------------------|
| | | | պարենային ապրանքներ | ոչ պարենային ապրանքներ |
| Արարատ | 5 | 229.2 | 23.4 | 76.6 |
| Արմավիր | 3 | 433.0 | 59.7 | 40.3 |
| Գեղարքունիք | 7 | 586.4 | 20.9 | 79.1 |
| Լոռի | 4 | 596.4 | 34.8 | 65.2 |
| Կոտայք | 9 | 785.2 | 45.1 | 54.9 |
| Շիրակ | 2 | 722.2 | 4.5 | 95.5 |
| Սյունիք | 1 | 28.8 | - | 100.0 |
| Տավուշ | 2 | 630.2 | 67.5 | 32.5 |
| ք. Երևան | 21 | 36206.0 | 15.1 | 84.9 |
| Ընդամենը ՀՀ | 54 | 40217.4 | 17.2 | 82.8 |

Հարկ է նշել, որ հանրապետությունում հաշվառված սպառողական ապրանքների շուկաները հիմնականում մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով: Մասնավորապես, 54 սպառողական ապրանքների շուկաներից 29-ը՝ ոչ պարենային ապրանքների վաճառքով մասնագիտացված շուկաներն են: Ընդ որում, ք. Երևանի 21 սպառողական ապրանքների շուկաներից՝ 12-ը, Գեղարքունիքի մարզում 7-ից՝ 4-ը, Լոռու մարզում 4-ից՝ 3-ը, Կոտայքի մարզում՝ 9-ից 4-ը մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով: Դրանով է պայմանավորված հանրապետության սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ծավալում ոչ պարենային ապրանքների ապրանքաշրջանառության մեծ տեսակարար կշիռը, որը կազմել է 82.8 տոկոս:

ՀՀ սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը 2000թ. հունվար-հունիսին ըստ Երևան քաղաքի և մնացած մարզերի (ամփոփ) (տոկոսով ընդհանուրի նկատմամբ)



Հարկ է նշել, որ 2000թ. հունվար-հունիսին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ հանրապետության սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ամբողջ ծավալում գրանցվել է ք. Երևանի շուկաների ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշռի աճ 0.7 տոկոսային կետով:

Մանրածախ շուկայի համեմատական ակտիվությունն ըստ մարզերի, 2000թ. հունվար-հունիսին

| Մարզեր | Բնակչության թվաքանակը 2000թ. հունվար-հունիսի (միջինը), հազ. մարդ | Ապրանքաշրջանառությունը 2000թ. հունվար-հունիսին, մլն. դրամ | Միջին հաշվով մեկ բնակչին ընկնող ապրանքաշրջանառությունը, դրամ | Մեկ բնակչին ընկնող ապրանքաշրջանառությունը հանրապետության միջինի նկատմամբ (%)՝ |
|-------------|--|---|--|---|
| Արագածոտն | 167.6 | 1036.9 | 6186.8 | 15.0 |
| Արարատ | 311 | 2641.2 | 8492.6 | 20.5 |
| Արմավիր | 322.5 | 3623.7 | 11236.3 | 27.2 |
| Գեղարքունիք | 278.7 | 1991.2 | 7144.6 | 17.1 |
| Լոռի | 394.2 | 4015.1 | 10185.4 | 24.5 |
| Կոտայք | 329.4 | 8107.5 | 24612.9 | 59.3 |
| Շիրակ | 362.2 | 5744.8 | 15860.9 | 38.2 |
| Սյունիք | 164 | 2213.6 | 13497.6 | 32.5 |
| Վայոց Ձոր | 69.2 | 169.4 | 2448.0 | 5.9 |
| Տավուշ | 156.8 | 2083.9 | 13290.2 | 32.0 |
| ք.Երևան | 1247.9 | 126235.3 | 101158.2 | 243.7 |
| Ընդամենը ՀՀ | 3803.5 | 157862.6 | 41504.6 | - |

2000թ. I կիսամյակում պահպանվել է 2000թ. I եռամսյակում արձանագրված Երևան քաղաքի մանրածախ շուկայի գերակայության միտումը, ի տարբերություն Հայաստանի մյուս մարզերի: Այսպես, ք. Երևանի մանրածախ շուկայի ծավալը 2000թ. I կիսամյակում մոտ 2.4 անգամ գերազանցել է հանրապետական միջին ցուցանիշին : Մնացած մարզերի մանրածախ շուկայի տնտեսական ակտիվությունը հանրապետական միջինի նկատմամբ հիմնականում տատանվել է մոտ 6-40%% միջակայքում, բացառությամբ Կոտայքի մարզի (մոտ 59%):

2000թ. հունվար-հունիսին ապրանքային պաշարների փոփոխությունը մանրածախ առևտրում և դրանց ապահովվածությունն օրերով

| Ամիսներ | Ապրանքային պաշարի ծավալը, մլն. դրամ | Ապրանքային պաշարների ապահովվածությունն օրերով |
|------------------------|-------------------------------------|---|
| փետրվարի 1-ի դրությամբ | 19229.5 | 80 |
| մարտի 1-ի դրությամբ | 21019.4 | 71 |
| ապրիլի 1-ի դրությամբ | 20502.2 | 70 |
| մայիսի 1-ի դրությամբ | 22361.8 | 66 |
| հունիսի 1-ի դրությամբ | 23700.1 | 64 |
| հունիսի 1-ի դրությամբ | 22772.8 | 53 |

2000թ. հունիսի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները հանրապետության մանրածախ առևտրի կազմակերպություններում կազմել է 22772.8 մլն. դրամ, իսկ ապրանքային պաշարների ապահովվածությունը՝ 53 օր:

1 Այս ցուցանիշի վարումը հնարավորություն կտա տարեկան կտրվածքով ստեղծել ըստ մարզերի, հետազայում նաև ըստ բնակավայրերի, շուկաների բևեռացվածության (աճի կամ նարման) միտումների մոնիտորինգի ձևավորման:

Մանրածախ առևտրի կազմակերպությունների ապրանքային պաշարները 2000թ. հունիսի 1-ի դրությամբ և դրանց ապահովվածությունը (օրերով) ըստ մարզերի

| | Հայաստանի Հանրապետություն, ընդամենը | այդ թվում մարզեր | | | | | | | | | | |
|---|-------------------------------------|------------------|-----------|--------|---------|-------------|-------|--------|-------|---------|-----------|--------|
| | | Բ. Երևան | Արագածոտն | Արարատ | Արմավիր | Գեղարքունիք | Լոռի | Կոտայք | Շիրակ | Սյունիք | Վայոց ձոր | Տավուշ |
| Ապրանքային պաշարները, մլն. դրամ | 22772.8 | 19994.6 | 88.4 | 213.9 | 141.6 | 246.7 | 429.3 | 550.0 | 731.5 | 174.7 | 25.3 | 176.8 |
| Ապրանքային պաշարների ապահովվածությունը օրերով | 53 | 52 | 33 | 24 | 47 | 89 | 70 | 87 | 76 | 39 | 58 | 65 |

Ապրանքային պաշարների ապահովվածությունը օրերով հանրապետության միջինից բարձր են Վայոց-Ձորի (58 օր), Տավուշի (65 օր), Լոռու (70 օր), Շիրակի (76 օր), Գեղարքունիքի (89 օր) և Կոտայքի (87 օր) մարզերում: Դա վկայում է այն մասին, որ նշված մարզերում դանդաղում են ապրանքների իրացման տեմպերը:

2000թ. հունվար-հունիսին, ըստ ներկայացված վիճակագրական հաշվետվությունների, մանրածախ ցանցի միջոցով բնակչությանը վաճառվել է հետևյալ կարևորագույն պարենային ապրանքատեսակները՝ 1204.4 մլն.դրամի անասնի և թռչնի միս, 796.5 մլն. դրամի երշիկեղեն, 17.1 մլն.դրամի ձուկ և ձկնեղեն, 440.4 մլն.դրամի կենդանական յուղ, 761.9 մլն. դրամի բուսական յուղ, 720.2 մլն.դրամի հալած յուղ և այլ սննդային ճարպեր, 264.1 մլն. դրամի մարգարինային արտադրանք, 229.5 մլն. դրամի կաթ և կաթնամթերք, 110.1 մլն. դրամի պանիր, 427.2 մլն. դրամի ձու, ձվամթերք, 4149.2 մլն. դրամի շաքար, 147.1մլն. դրամ հրուշակեղեն, 975.3 մլն. դրամի օղու և օղու-լիկյորային արտադրանք, 286.0 մլն. դրամի գինի և շամպայն, 78.3 մլն. դրամի կոնյակ, 342.4 մլն. դրամի ոչ ալկոհոլային ըմպելիքներ: Ոչ պարենային ապրանքներից վաճառվել է 108.0 մլն. դրամի բամբակե , բրդյա և մետաքսե գործվածքեղեն, 126.8 մլն.դրամի կոշիկեղեն, 664.1 մլն դրամի անձնապիտո ապրանքներ, 232.7 մլն. դրամի ձեռքի, տնտեսական օճառ և սինթետիկ լվացամիջոցներ, 1268.4 մլն. դրամի դեղամիջոցներ: Վաճառվել է նաև 1190 հատ կենցաղային լվացքի մեքենաներ, 1770 հատ կենցաղային փոշեծծիչներ, 1401 հատ ժամացույց, 5307 հատ հեռուստացույց, 1700 հատ սառնարան, 3027 հատ արդուկ, 20043 հատ մագնիտոֆոն և 2040 հատ տեսամագնիտոֆոն:

Հանրապետության սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: 2000թ. հունվար-հունիսին այդ շուկաներում իրականացվող առևտրին բաժին է ընկել ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալի 6.8 տոկոսը կամ 10719.6 մլն. դրամը՝:

2000թ. հունվար-հունիսին գյուղատնտեսական արտադրանքի շուկաների միջոցով բնակչությանը վաճառվել է 40.2 մլն. դրամի հացահատիկային մշակաբույսեր, 314.9 մլն. դրամի կարտոֆիլ, 881.2 մլն. դրամի բանջարեղեն, 1103.5 մլն. դրամի մրգեր և հատապտուղներ, 3279.4 մլն. դրամի միս, 304.0 մլն. դրամի պանիր, 400.4 մլն. դրամի ձու և 194.5 մլն դրամի ձուկ: